№ 40 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 13 **1898** ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 13 № 40

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ **1898** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(26-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻՐ

ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԴ ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» դրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ ղ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով: Բառին վճարվում է 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քարացած վիթխարին.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կոչման բարձրութեան վրա. Թուլամորթներ. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Շուշու գաւառից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Անգլիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլիքի աղջիկը.

ՔԱՐԱՑԱԾ ՎԻԹԽԱՐԻՆ

—

Հեռաւոր Արևելքում այժմ տեղի ունեցող դէպքերը միայն քաղաքական նշանակութիւն չունեն: Նրանք հեռաքրքրական պիտի լինեն իբրև պատմական մի նշանաւոր դաս իւրաքանչիւր ազգի համար, որ ուզում է իր գոյութիւնը հաստատել անխախտ, դիմացկուն հիմքերի վրա, որ չէ ուզում ոչնչանալ բնութեան անողորմ և անխուսափելի օրէնքից, գոյութեան կռիւի մէջ: Ասիայի արևելեան ափերում ընկած պետական այն վիթխարի կազմակերպութիւնը, որի անունն է Չինաստան, այժմ, մեր աչքերի առաջ, ցոյց է տալիս թէ ինչ սոսկալի ինքնասպանութիւն է անշարժութիւնը...

Իր գոյութեան սկզբից Չինաստանը մշակեց իր համար մի դժբախտ հասկացողութիւն—մնալ հեռու միւս ազգերից, առանձնանալ, փակվել ամեն կողմից և բացի սեփական գործերից, բացի տեղային, հայրենի իմաստութիւններից չընդունել ոչ մի բան, որ միւս, նոյն իսկ հարևան, նոյն իսկ յեղակից ազգերի հանճարն է արտադրում: Եւ այդպէս նա ապրեց մի շարք դարեր, ամբողջ հազարաւոր տարիներ: Չինական ազգը բնութիւնից բութ ու անընդունակ չէր: Նա ստեղծեց իր կուլտուրան, հասաւ լուսաւորութեան մի յայտնի աստիճանի, ծաղկեցրեց իր դեղարուեստը, իր գիտութիւնը: Ամենահին ժամանակներում, եւրոպացիներից շատ առաջ, նա թուղթ պատրաստելու հնարը գտաւ, տպագրութեան գիւտն արաւ: Եւ նրան սպանողը բնական անընդունակութիւնը չէր, ճակատագրական այն բթութիւնը, որ յատուկ է շատ ցեղերի, այլ այն, որ այդ ազգը իր բոլոր ընդունակութիւններով հանդերձ, դարերի ընթացքում վախեց շրջապատող լոյս աշխարհից, չուզեց սովորել ուրիշներից: Ազգային մտապարծութիւնը, որ ամենից առաջ ստեղծում է սեփական խելքի գերազանցութեան անբուժելի մոլորութիւնը, այն աստիճան կուրացրեց Չինացուն, որ նա չը կարողացաւ ըմբռնել մի պարզ ճշմարտութիւն, այն, որ չը կան առանձնաշնորհված ազգեր, որոնք ունեն աշխարհը երջանկացնելու մենաշնորհը, այլ բոլոր ազգերը պիտի աշխատեն ընդհանուր առաջադիմութեան համար ինչպէս աշխատաւորներ, որոնցից իւրաքանչիւրը մէջ տեղ է բերում իր ձեռք բերածը: Ամբողջ սերունդներ չաշխատեցին, առաջ չը գնացին. Նրանք չը հասկացան, որ կանգնելը նշանակում է յետ մնալ, իսկ յետ մնալը անխուսափելի մահ է: Դրա փոխարէն նրանք ահագին աշխատանք թափեցին և հսկայական պատով առանձնացան ցամաքի կողմից, իսկ ծովի կողմից փակեցին իրանց բոլոր նաւահանգիստները: Չինաստանը դարձաւ մի առասպելական անմատչելի հրէշ, ամեն կողմից փակված մի մնդուկ: Այդ նեղ շրջանում, այդ վիթխարի սահմանափակումների մէջ կեանքը լճացաւ և սկսեց քարանալ...

Եւրոպական ազգերը վաղուց աշխատում էին պատռել այդ կախարդական շրջափակը, ներս մտնել, մտքերի, տնտեսական արդիւնաբերութիւնների փոխանակութիւն կատարել: Բայց իզուր. Չինականութիւնը դարերի ընթացքում սովորել էր դրսից եկած իւրաքանչիւր բան համարել վատ, զզուելի և սատիկ վնասակար: Բայց այդքան կարծրամտութիւնը, լոյսի և քաղաքակրթութեան մերժումը չէր կարող անպատիժ մնալ: Եւ ահա նորագոյն պատմութեան մէջ առաջ եկաւ այսպիսի մի զարմանալի հակադրութիւն: Չինաստանը մնաց իր անշարժութեան սիրահար, իսկ նրա մօտ գտնվող Եապօնիան, մի համեմատաբար փոքրիկ պետութիւն, սկսեց սովորել, իւրացնել այն ամենը, ինչ լուսաւոր ազգերն էին մշակել: Չինաստանը մազի չափ չը շեղվեց իր հին բռնապետական կարգերից և իր խաւար հասկացողութիւններից, իսկ Եապօնիան դարձաւ սահմանադրական երկիր, ազատ կարողութիւն տրեց իր ժողովրդի բոլոր խաւերին գործել, աշխատել, քաղաքակրթվել: Այդ փոքրիկ, բայց կենսունակ, իր առաջադիմութեամբ ուժեղ պետութիւնը երեք տարի առաջ յարձակվեց քարացած վիթխարի վրա, ջարդեց նրան: Իսկ այժմ:

Այժմ Չինաստանը իր 400 միլիոն բնակիչներով եւրոպական ազգերի ձեռքին մի խաղալիք է դարձել: Ֆրանսիան պահանջում է, որ չինական պօստերի կառավարիչը Ֆրանսիացի լինի, Անգլիան պահանջում է, որ չինական երկաթուղու կառավարիչ անգլիացին չը հեռացնվի պաշտօնից: Եւ այսպէս հարիւր ու մի պահանջներ: Չինաստանից խլում են ամբողջ երկիրներ, հարկադրում են, որ չինական նաւահանգիստները բացվին եւրոպացիների առաջ: Վերջիններս մտել են երկրի խորքը, շահագործում են, երկաթուղիներ են կառուցանում, հանում են բոլոր հարստութիւնները... Իսկ Չինաստանը իր 400 միլիոն բնակիչներով մնացել է դերի, անպաշտպան, խեղճ, ձեռքերը ծալած: Նա դեռ շարունակում է երևակայել թէ չինացին ամենալաւ ազգ է, որ ոչինչ պակասութիւն չունի...

Ամենամեծ ազգը փտում, ոչնչանում է իր զարհուրելի անշարժութեան պատճառով: Ահա խրատական դասը...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

—

Ասլանը չը թագցրեց, որ իր այրվող սիրտն էր իրան այստեղ բերել: Օտարութիւնից վերադարձած, նա մի օր էլ չը կարողացաւ մնալ իր հայրենիքում. ամեն տեղ կրակ էր, որ այրում էր նրան: Ի՞նչ օրեր են: Մինչև անգամ Մէլիք-Ասան էլ է չչկրվել:

—Հա, մէլիքը... Շատ ժամանակ է մեր տղաները չեն տեսնում նրան: Ի՞նչ է ուզում:

—Ոչինչ, ոչինչ... Ձար բոլորովին չը կայ, յուսահատութիւնը կատարեալ է... Մէլիքի դրութիւնը անտանելի է: Մարդը ազատ չէ, նման է մի հսկայի, որ տեսնում է ծովի մէջ խեղդվող ահագին բազմութիւնը, ընկնում է կատաղած ալիքների մէջ, որ ազատէ ամենքին, բայց խեղդվողները քաշում, տանում են նրան և նա հազիւ է կարողանում ինքն իրան պահել ջրերի երեսին: Կայ մի ուրիշ մարդ, որ չէ ընկել ծովը, այլ, ընդհակառակը, բարձրացել է սարի գլուխը, որին չեն հասնում թշուառութեան ալիքները: Այդ մարդը Մանասն է. ինչ է ուզում Մանասը...

—Մենք կուսում ենք և պիտի կուենք: Մենք երբէք չենք դադարի:

—Ես այդ տեսնում եմ: Այսպիսի գէրերի տէրը ուրիշ խօսք ասել չէ կարող: Բայց դու էլ մենակ ես:

—Մենակ էլ կը կուենք: Մենք օգնութեան չենք սպասում:

—Մի բուռն մարդիկ ահագին բազմութեան դէմ...

—Այդ չէ նշանակում թէ չը պէտք է կուել: Գարնանը մեր տղաների թիւը հասնում է հաւիւրի: Հաստատ իմացէք, որ ամեն մէկը հինգ մարդու դէմ կը գնայ, եթէ իմանայ օգտվել մեր սարերից: Բայց մեզ դէմ հինգ հարիւր հոգի չեն բերում, և մենք մեծ կռիւների չատ քիչ ենք հանդիպում: Մեր հրացանների նպատակը հատ հատ օսմանցիներ են: Երբ թիփ ետևից ծիսում է մեր հրացանը և օսմանցին փռվում է հողի վրա, մենք ամենքս ուրախ ենք. մէկն էլ, ուրեմն, չը կայ, մէկն էլ պակասեց...

—Բայց դա մանր կռիւ է:

—Մանր, բայց անողորմ, անխնայ...

—Այդպէս տարիներ են հարկաւոր:

—Աւելի լաւ է յոյս դնել տարիների վրա, քան չունենալ որ և է յոյս: Մենք փոքր ենք, իսկ մեր թշնամին մի ահռելի վիշապ է—դու ճիշդ ասացիր: Բայց ինչ կարող ենք անել. եթէ միանգամից ոչնչացնել անհնարին է, գոնէ պիտի աշխատենք կամ կամ հանել հրէշի արիւնը: Կամ կամ, բայց անընդհատ. այդպէս են յաղթում փոքրները: Թող վիշապը լինի լերան չափ, ունենայ տասը գլուխ. եթէ նրա դիմաց մենք դառնանք ջնջին, բայց ժիր ոտքուներ, դարձեալ մենք կը լինենք շահվողը. ժամանակի ընթացքում մեզ կաջողվի ցամաքեցնել հրէշի կազմուածքը:

—Այո, եթէ կարելի լինէր կախարդել հրէշին, գցել նրա վրա մի հրէշային թմրութիւն, հէքիաթների թանձր քունը, որ տարիներ է շարունակվում,—պատասխանեց Ասլանը հոգոց հանելով:—Բայց մեր հանած իւրաքանչիւր կամիկի փոխարէն՝ մենք տալիս ենք գետեր, փրփրած գետեր: Ո՞վ չուտ կը սպառվի...

Մանասը ծիծաղեց, կարծես շատ անգամ էր լսել այդ խօսքերը. ապա յանկարծ տաքացաւ և, չը կարողանալով դադար գտնել, շուռ եկաւ մէջքի վրա ու նստեց:

—Դու, կարծես, Մէլիք-Յուսէֆի կնոջ մօտից ես գալիս, ասաց նա:

—Նրա երեսն էլ չեմ տեսել...

—Բայց նրա խօսքերը լաւ ես կրկնում: Լսիր, ես նոր եմ հասկանում, որ մարդը շատ է սխալվում: Ինձ համար կանանց մէջ ամենալաւը, նա, որ արժան էր մի հսկայ տղամարդի կնիկը լինել, Մէլիք-Ասանի քոյրն էր, Անտա-խաթունը: Այդ բաւական չէ. սուրբ մարդկանցից ոչ ոք, ինձ համար, նման չէր Աւետարանոցի մայրապետին, որի անունն է Հեղինէ: Հիմա ես գիտեմ, որ երկուսն էլ ոչինչ են: Մթթէ դու էլ, Ասլան, մեր երկրի լաւ երիտասարդներից մէկը, կարդացած, աշխարհ տեսած, ամենաճարտար որսորդ, պիտի ուրիշ բան երևաս իմ աչքում:

—Դա ինչ խօսք է:

—Ահա ինչ: Ամառը, երբ մենք մի փոքրիկ վրէժ հանեցինք զիլանցիներից, Մէլիք-Յուսէֆի կինը ինձ լուր ուղարկեց, որ ինքը հակառակ է մեր գործին, երես է դարձնում ինձանից: Ինչ ծածկեմ, դա ծանր հարուած էր ինձ համար. ինձ ամենից առաջ մերժում էր այն տունը, որի օջախը սուրբ է ինձ համար, որից կուզէի հեռանալ՝ միայն գերեզման գնալու համար: Եւ մերժում էր այն ժամանակ, երբ մեր տղաները ուրախութիւնից չէին կարողանում դադար առնել, քնել: Նրանք կատարել էին մի ահագին գործ, բայց ինչ էր վարձատրութիւնը: Մեզանից երես էին դարձնում մեր ամենամօտիկ բարեկամները, մեր ծնողները: Ես լռեցի: Անցաւ ժամանակ, մի օր էլ եկաւ Կուսանոցի հրամանը. կոյս Հեղինէն, Աւետարանոցի ամենախելօք մարդը, հրամայում էր, որ ձեռք վերցնեմ արիւնոտ գործերից, կորչեմ մեր սարերից, թէ չէ՝ եկեղեցին ինձ կանիծէ և Աստուած խռով կը մընայ մեզանից: Եկեղեցին, ի հարկէ, ուժեղ է մէլիքի իշխանութիւնից: Բայց նա չէր վախեցնի Մանասին, որ այնքան ժամանակ ապրել է Տէր-Սողոմոնի հետ...

Այդ անունը մի վայրկեան կանգնեցրեց փոքրիկ մարդուն, մի թեթև հառաչանք հանեց նրա սրտից:

—Բայց թող մնայ, ասաց նա:—Կարճ կտրենք—երկու կանայքը ասում էին այն, ինչ դու ասացիր: Այժմ կանգնեցէք երեքդ այս օջախի մօտ, նայենք միմեանց երեսին: Փրփրած գետեր են հանում մեզանից, այսպէս ասացիր դու: Շատ ճիշդ... Դու կամ քո երկու ընկերուհիները խօսք տուէք ինձ թէ այդ գետերը կը դադարեն, եթէ սարի գլխին մի Մանաս չը լինի, և ես վաղը, քո աչքի առաջ, ղէն կը գցեմ հրացանս ու կը կորչեմ: Խօսք տալիս էք:

—Բայց ինչու դու այդ կանանց ընկեր դարձրիր ինձ. ես այդպէս չէի ասում:

—Քո ասածն էլ կը լսենք. բայց նախ պատասխանիր. խօսք տալիս էք:

—Ոչ ոք չի ասայ...

—Ողորմի հօրդ... Մենք տղրուկներ ենք, կամ կամ արիւն ենք հանում: Ո՞րտեղ դոյացանք մենք:—Այնտեղ, ուր առաջին անգամ, առանց պատճառի, լոկ սոսրացնելու, ոչնչացնելու համար, թափվեցան արեան գետեր: Մենք լոյս ընկանք այն օրը, երբ Վարանդայի երկինքը զարհուրեց իր տակ կատարված անարդարութիւնից: Դա մի վճռական օր էր. բազմութիւնը, քաղցը տամարելով գրաստի կեանքը, գնաց խոնարհվելու: Իսկ հատ-հատ մարդիկ, որոնց մէջ չէր մարել Աստուծու բարկութեան կրակը, դուրս վազեցին, և նրանց առաջին աղաղակն էր՝ «կռիւ»: Անհաւասար, անխելք կռիւ... Ինչու ես զարմանում. չես տեսել ինչպէս է մի մարդը յարձակվում հինգի վրա. չը գիտես միթէ, որ նա իր ոյժի վրա յոյս չունի, այլ յարձակվում է, որովհետև գիտէ մեռնել: Ուրեմն, մեզ վրա էլ մի զարմանար. արեան գետերը մենք չը բերինք, այլ ընդհակառակը, նրանք մեզ դուրս հանեցին. նրանք կայնին, երբ մենք չը կայինք...

—Ճշմարիտ է, ասաց Ասլանը, ձեռքը մտերմաբար դնելով խմբապետի ուսի վրա:—Հանգամանքները ստեղծում են կռիւ տեսակներ. մի տեղ մեծ չափերով է լինում, մի տեղ այսպէս. մի տեղ կամ-կամ, միւս տեղ գետի նման...

—Ի՞նչ օգուտ մեր կռիւից, հարցնում են մար-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՉՄԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ

Մեծ պասի ընթացքում դրամատիկական ներկայացումներ տալու խնդիրը դեռ վերջնականապէս չէ ձևակերպված կառավարչական շրջանակներում, բայց հաւանականութիւն կայ, որ նա կը վճռվի դրական կերպով։ Հեղինակաւոր հիմնարկութիւնների և անձնաւորութիւնների կարծիքները թատրոնի կողմն են. հակաճառութիւնները և տարբեր հայեացքները վերաբերում են միայն ներկայացման բնաւորութեան։ Բեմական գործողների համառուսական ժողովում, որ կայացաւ մի տարի սրանից առաջ, 1897 թ-ի մարտ ամսին, մանրամասն քննութեան ենթարկվեց այդ հարցը։ Ժողովի անդամները համարում էին, որ թատրոնի վերաբերեալ սահմանափակումները հետևանք են միայն թիւրիմացութեան կամ սխալ հայեացքների թատրոնի կրթող նշանակութեան մասին։ Զեկուցողներից մէկը յիշեցրեց ժողովականներին Գոգոլի ձևակերպութիւնը այդ առարկայի մասին։ «Թատրոն էլ կայ, թատրոն էլ, ասում է Գոգոլ, ինչպէս որ և հասարակութեան հրճուանքը երկու տեսակ է լինում։ Կայ մի հրճուանք, որ առաջ է գալիս այն տեսարանից, երբ բալետային պարուհին բարձրացնում է իր ոտը որչափ կարելի է բարձր, բայց կայ և մի ուրիշը, երբ հրճուանքի պատճառը այն տաղանդաւոր դերասանն է, որ իր ուժեղ և սրտեր ցնցող խօսքով բարձրացնում է մարդու մէջ վսեմ զգացմունքներ։»

Անկասկած այդ թատրոնի մասին են խօսում բոլոր այն մարդիկ, որոնք վերագրում են նրան հասարակական և կուլտուրական նշանակութիւն կեանքի մէջ։ Այդ իսկական գեղարուեստական թատրոնն է, որի վրա աշխատել են և աշխատում են լուրջ դրամատիկական գործողներ։ Թատրոնի գաղափարին վնասում է այն հանգամանքը, որ այդ անունն են կրում յաճախ և այն ամեն տեսակ ներկայացումները ու հանդէսները, որոնք նպատակ ունեն գրգռել ստոր կրքեր հանդիսականների մէջ կամ բաւարարութիւն տալ զգայական և հեշտասիրական հակումներին։ Եթէ այդ է թատրոնը, այն ժամանակ թատրոնի կրթական կոչման մասին չէր համարձակվի ոչ ոք մի ձայն հանել, այն ժամանակ թատրոնից երես դարձրած կը լինէին այն բարձր գաղափարական անձնաւորութիւնները, որոնք նուիրեցին իրանց գործունէութեան նշանաւոր մասը, իսկ երբեմն և ամբողջ կեանքը թատրոնի զարգացման։ Թատրոնի պաշտպանները խօսում են այն թատրոնի մասին, որտեղ տիրում է Շիլլերի, Շէկսպիրի, Գէօթէի, Բոմարշէի, Կալդերոնի, Մոլիէրի, Գոգոլի, Օստրովսկու, Իբսէնի, Զուդերմանի, Հաուպտմանի գրուածքների ոգին։ Այդպիսի թատրոնը իսկապէս կրթական է և նա ոչ միայն չէ խանգարում և վնասում հասարակական բարոյականութեան, այլ նա մեծապէս նպաստում է բարձր գաղափարական զգացմունքների կրթութեան և կատարելագործութեան։

Ինչ վերաբերում է ձևին, թատրոնը այն հիմնարկութիւններից մէկն է, որ յայտնի է հին ժամանակից և նա հին դարերում կրում էր նոյն իսկ կրօնական նշանակութիւն։ Մեր դարի իդէալական ձգտումների և հասարակական բարձր զգացմունքների զարգացման համար թատրոնը ամենաուժեղ ասպարէզներից մէկն է։ Այդ է գլխաւոր դրդիչ և ոգևորիչ հանգամանքը, որ ցանկանում է տեսնել գեղարուեստական լուրջ թատրոնը ազատ կասկածներից և սահմանափակումներից։ Այդ մի կողմից։ Բայց միւս կողմից բեմական գործողները պէտք է միշտ իրանց աչքի առաջ ունենան թատրոնի իսկական կոչումը և երբէք չիջեցնեն նրան այն բարձրութիւնից, որի վրա նա պէտք է կանգնած լինի, որպէս զի նա իսկապէս ներկայանայ մեր առաջ իբրև լուրջ կրթական մի գործօն կեանքի մէջ։ Ն—եան

ԹՈՒԼԱՄՈՐԹՆԵՐ

Մի ռուս ճանապարհորդ, Ամերիկայում ճանապարհորդելու ժամանակ, հետաքրքրվելով այնտեղ հաստատված ռուս գաղթականների կեանքով, ամեն տեղ լսում է այն կարծիքը, թէ փախած նաւաստիները և գիւղացիները գործ են սկսել և աջող կերպով տանում են իրանց գործը, իսկ ինտելիգենտ ռուսները, շատ քիչ բացառութեամբ, չքաւոր կեանք են վարում։ Մինչև անգամ վատ են տանում իրանց գործը այն ինտելիգենտ անձինք, որոնք բերել են իրանց հետ և մի յայտնի գումար՝ գործ սկսելու համար։ Ինտելիգենտ ռուսին, պատմում է ճանապարհորդը, պակասում են ըջութիւն, գործավարական հմտութիւն, տոկունութիւն։ Մտնելով թղթերի և դիւանատան գրագրութիւնների աշխարհը, նա կորցնում է գործնական կեանքը ըմբռնելու և նրա համար գործելու ընդունակութիւնը։

Մի և նոյն երևոյթը մի յայտնի չափով տեղի ունի և մեր կեանքում։ Մեր գիւղական և աշխատող դասակարգը շատ շուտ կարողանում է օտար տեղում գործ գտնել իր համար և ապահովել իր կեանքը։ Եթէ նա երբեմն դիմում է ատում և նպաստներ կամ ողորմութիւն խնդրում, դա տեղի է ունենում բացառիկ դէպքերում, միայն ժամանակաւոր օգնութիւն ստանալու նպատակով։ Իսկ այն դասակարգը, որ այս կամ այն պատճառով փոքր ինչ յետ է սողոքել լուրջ և տոկուն աշխատելուց, նա մնում է անգործ, թափառում է մի հիմնարկութիւնից դէպի միւսը, անցնում է մի բարերարից միւսին և վերջի վերջոյ, չը նայելով բոլոր օժանդակութիւններին, մնում է անապահով և թշուառ։

Նոյն իսկ այնպիսի արտասովոր դէպքում, ինչպէս էր թիւրքաց Հայաստանի ժողովրդի անգին խմբերով մեր երկիր գաղթելը բացառիկ թշուառութիւնների պատճառով, չարքաշ և աշխատող գիւղական ժողովուրդը մնաց իրան հաւատարիմ։ Բուն երկրագործը, մաճի և գերանդու տէրը ամեն հնար գործ դրեց, որպէս զի ձեռք չը մեկնի ողորմութիւն խնդրելու համար։ Եւ մեր բարեգործական հիմնարկութիւնների և մասնաժողովների առաջ ներկայանում էին գլխաւորապէս կամ դժբաղդացած որբեր, այրիներ և ֆիզիկապէս վնասվածներ, որոնք չունէին աշխատող ձեռքեր կամ թէ փչացած, թուլամորթ, փափուկ և մեղկ կեանքի սովոր անձնաւորութիւններ, որոնք և առաջ՝ սովոր չէին լուրջ և տոկուն աշխատանքի։ Թուլամորթութիւնը, գործից փախչելը թոյն է, և եթէ նա սկսի տարածվել մի ազգի մէջ, կը քայքայի թէ անհատի և ընտանիքի, թէ համայնքի և հասարակութեան կեանքը, բանալով դուռ՝ անկման և այլասերման համար։

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

Բանանց գիւղ, մարտի 8-ին

Գանձակի գաւառի լեռնային մասերում, ուր տարածված է հայաբնակ գիւղերի մի մեծ ցանց, ձմեռվայ արհաւիրքները երբէք այնքան զգալի չէն եղել վերջին տարիներս, որքան այս տարի. երկու-երեք արշին հաստութիւն ունեցող ձիւնի շերտը ծածկում է լեռները, ձորերն ու լայնատարած հովիտները, որտեղ գտնվում են գիւղացիների եաթաղներն ու գոմերը։ Ծերերը այսպիսի աղետաբեր ձմեռ դժուարութեամբ են յիշում։ Գիւղերը նոյնպէս ծածկված են ձիւնի տակ։ Ձմեռն այժմ մի բնական սարսափելի աղետ է ժողովրդի համար. նա դեռ շարունակվում է և օրէցօր աւելի սաստկանում և այդ այն ժամանակ, երբ գիւղացին, իր խոփն ու ձեկը սրած, պիտի դաշտ դուրս գար՝ գարնան վար ու ցանքսին անելու, երբ անասունների երամակները պիտի դուրս գային արօտատեղերում արածելու։ Ձմեռն այժմ աղետալի է այն պատճառով, որ նա շատ ուշ սկսվեց. մինչև փետրվարի կէսը լեռներում անդամ ձիւն չէր նկատվում. դրանից յետոյ միայն սկսվեց իսկական ձմեռը, երբ բոլորովին սպառվել էր մարդկանց և անասունների ձմեռվայ պաշարը։ Մարդկանց սովին այդ պատճառով աւելացաւ անասունների սովը։ Խոտ ու դարման ձեռք բերելու համար գիւղացիները ստիպված են գնալ քաղաք ու Կուրի ափերի դաշտավայրը, որտեղ հազար ու մի նեղութիւններով կարողանում են ձեռք բերել իրանց անասունների ապուռը և բեռներով կրում են գիւղերը՝ սովից կոտրվող անասուններին փրկելու համար։ Աւելորդ է ասել, որ այս դժուար հանգամանքների մէջ էլ ժողովրդի թշուառութիւնը ու բնութեան աղետը չահագործողների թիւը ոչ թէ միայն չէ պակասում, այլ օրէցօր ստուարանում է. բնական պատուհասը ասպարէզ է հանում տասնեակ ճիւաղներ, որոնց քարացած սրտերը երբէք չեն չարժվում թշուառի արտասուքից, որոնց համար այդ դառն արտասուքը ոսկի կաթիլներ են, քանի որ նրա շնորհով է միայն փքվում մարդ-ճիւաղի անյատակ դրպանը։

Անասունների կոտորածը Գանձակի գաւառի գիւղերում այժմ սարսափելի է. ծերերը հաւատացնում են, առանց չափազանցնելու, որ երբէք ոչ մի ցաւ, տաբարի աղար, այնքան անասուններ չէ փչացրել, որքան սովը, ապուռի կատարեալ բացակայութիւնը։ Կան գիւղացիներ, որոնք զրկվել են մի քանի հարիւր գլուխ ոչխարներից. նոր ծնված գառները համարեա ամեն տեղ կոտորվել են, թէ լեռներում և թէ դաշտավայրերում. կովեր ու եզներ նոյնպէս շատ են կոտորվում։ Վերջինների կորուստը աւելի զգալի է գիւղացիների համար, քանի որ նրանցով նա պէտք է սկսէր իր գարնանային վար ու ցանքը։ Առանց կաթ ու մածունի «խիզանը» մի կտոր չոր հացով էլ եօլա կը գնա, իսկ առանց «ըմբլի եզան» տուն ու տեղը չը քանդվի խսպառ։ Շատ գիւղերում, որոնք քաղաքից հեռու են ընկած ու կորած են լեռների խորքերում, գիւղացիները հնարաւորութիւն չունեն քաղաքից խոտ ու դարման կրել. այնտեղ անասունները սովամահ են լինում անխնայ։ Շատերը, հազիւ կարողանալով իրանց ուտելու հացը գտնել, անասուններին ուղղակի թողնում են կոտորվելու. երկուսից մինն է մնում նրանց ընտրել՝ կամ իրանց փրկել սովամահ լինելու վտանգից, կամ անասուններին. բնականաբար, իրանց կեանքն աւելի են գնահատում։

Գանձակի գաւառում ամենաթշուառ ու խղճուկ գիւղն է լեռնաբնակ Զովդարը, որտեղ այժմ սով է տիրում, բառիս բուն նշանակութեամբ. պարապմունք չը կայ, փող առաւել ևս չը կայ. ամբարում ցորենի հատիկ անգամ չէ մնացել. ամեն ինչ դրսում ծածկված է ձիւնով. ինչ է մնում անել խեղճ չովդարցուն։ Ամեն տարի այս ժամանակ նա արդէն լծում էր գութանը և սկսում իր «դօրօն», իր սիրելի «հօրօլոն» ու «վարի բալամ ջանը», իսկ այժմ տանջվում է սովի ու ցրտի ճանկերում։ Ի՞նչ անի խեղճ գիւղացին. ո՞ւմ դիմի. ո՞ւմից նա կարող է փրկութիւն սպասել։ Նա ունի մի փրկիչ միայն, որն աւելի սոսկալի է նրա համար, քան ցրտաշունչ ձմեռը։ Օգուտ կայ, և ահա ինչ օգուտ։ Օսմանցիները գայլեր են, բայց բաւական չեն համարում իրանց ատամները, որպէս զի մեզ լաւ ծուատեն։ Նրանք իրանց ատամներից գնում են և մինների բերանում և ուղարկում են մեզ ուտելու։ Իւրաքանչիւր քոսոտ մուսիլման մեր գլխի տէրն էր դարձել։ Մեր ձեռքից խլում էին ղէնքերը, և տալիս էին մեր հարևան մուսիլմաններին։ Գայլի կծածը շատ չէ ցաւեցնում, երբ սկըսում ես մտածել, որ գաղանը քեզանից շատ ուժեղ է։ Անտանելին մկան կծածն է. անտանելին այն է, երբ քեզ գզգզում է վախկոտ ու մերկ գողը և ինչով—փոխ առած ատամներով. սուր ատամներ են գրանք, բայց մթթէ գործադրողը մկան թոյլ ծնօտները չեն... Ի՞նչպէս չը յուսահատվել, ինչպէս չը համոզվել, որ այնուհետև ճանճն էլ կուտէ քեզ։ Ամենավատը այդ համոզմունքն է. երբ մարդը հասկանում է թէ աշխարհի մէջ ամեն ինչ բարձր է իրանից և իր կեանքի տէրն է, նա դառնում է մի զարհուրելի բան. ճիճուն էլ նրանից ստոր չէ... Այժմ մինները մտան իրանց ծակերը. այժմ նրանք գիտեն, որ գայլից փոխ առածը դեռ բաւական չէ, որ մուկն էլ գաղան դառնայ։ Մենք խրատեցինք նրանց. դայլից փոխ առածը դեռ բաւական չէ, որ մուկն էլ գաղան դառնայ։ Մենք խրատեցինք նրանց. և մեր ժողովուրդը, ապահով եղիր, այլ ևս չի խորովվի մինների ձեռքին. ամենագլխաւորն այն է, որ նա չի կարծի թէ մժեղն էլ կարող է իր հոգին հանել... Սա քիչ բան չէ...

—Ոչ ոք այդ չէ ուրանում։ Բայց իմ ասածն այդ չէր, Մանաս։ Երկու կանայք քեզ անիծում են, ասելով, դու չը պէտք է սաստկացնես հրդեհը. իսկ ես, ընդհակառակն, քիչ եմ համարում այդքանը։ Ես համաձայն չեմ կաթ-կաթ արիւն հանելուն. և հէնց այդ պատճառով էլ զանց եմ անում մինների, ադուանների, ծուերին, որոնք ընդհանուր աւերմունքի ժամանակ մի-մի բան գողանում են, տանում։ Ինձ Մէլիք-Աւանը ասաց, որ ամեն ինչ ձեռքից գնում է, որ այլ ևս սպասել անհնարին է... Եւ ես հաւատում եմ որ այդպէս է։

—Ասելը, հաւատալը բաւական չէ...

—Ի՞նչ անել։ Քեզ գլորել են գետնի վրա, նստել են քո կրծքին. դու պիտի դուրս գաս քեզ ճնշող մարմնի տակից ու յետոյ փորձես ոյժդ...

Օջախում այրվող կոճղներից մէկը, բաժանվելով իր ընկերից, գլորվեց ընկաւ երկու խօսակիցների առաջ. կծու մուխը սկսեց խեղդել. քնածներից մէկը գլուխը բարձրացրեց և ջուխտ ձեռքերով չփում էր իր աչքերը։ Մանասը վեր կացաւ, կարգի բերեց խանձողները։ Անտանելի ծխից ազատվելու համար նա փորձեց բոցեր արձարձել. յենվելով ձեռքի թաթերի վրա, դէմքը մօտեցրեց կրակին և սկսեց փչել։ Բայց ահագին խանձողները դիմադրում էին նրա ջանքերին. փոքրիկ լոյսը, որ հազիւ էր դուրս գալիս նրանց կարծր գլուխների արանքից, երևան էր հանում խմբապետի նիհար, ծաղկատար դէմքը, որ ծածկված էր նօսր, ալեխառն մազերով. նա անվրդով յամառութեամբ մրցում էր ծխի ոլորուն քուլաների մէջ։ Ասլանը սաստիկ հետաքրքրութեամբ նայում էր այդ մարդուն։ Անհրապոյր, կոպիտ, նոյն իսկ անխիղճ էր ֆանատիկոս զինուորը. բայց ինչպէս էր խօսում իր գործի մասին. որպիսի հաւատ, որքան անյողդողդ կամք... Փոքրիկ մարդուց շատ բան էր կախված. վաղը նա, եթէ կամենար, կարող էր տակն ու վրա անել ամբողջ երկիրը. նրանից վախում են, նրա դէմ զօրաբաժիններ են ուղարկում... Բայց նա գլուխ դնելու տեղ չունի. ինչպէս է մրցում ծխի դէմ, որպէս զի քիչ հանգստանայ... Նրա աչքերից ջուր էր գնում...

Ասլանը մեղք համարեց անտարբեր մնալը և տեղից վեր թռչելով, ինքն էլ սկսեց օգնել Մանասին։ Կրակը թէժացաւ, նրանք յետ նստեցին և այլ ևս չը պառկեցին։

—Թող փորձեն, ասաց խմբապետը, նայելով հրեղէն երկար լեզուներին, որոնք թռթռում էին ծխի ծովի մէջ։—Թող փորձեն չափելով, կշռելով, զանազան հանգամանքներ նկատի առնելով։ Մեզ համար այդպիսի բան չը կայ։ Առաջն անում է. «Մինչև խելօքը մտածում էր, գիժը գետն անցաւ։» Զուր չեն մեզ գիժ անուանում...

—Եթէ շատ լինէին ձեզ պէս գիժերը, եթէ այս մտքերը միայն այս սարերի վրա չը լինէին տարածված, ուր քաղցած աղուէսներն ու գայլերն են մեզ դալիս, այլ հաստատ ու անհերքելի լինէին և մարդկանց մէջ, ժողովրդի սրտում...

—Լաւ կը լինէր, հա... Եթէ լաւ է, ինչու՞ չէք անում։ Վայ այն քաղցածին, որ մէջքի վրա պառկում է, բաց է անում բերանը և սպասում է թէ երբ երկնքից կերակուր կընկնէ ուղիղ բերանի մէջ։ Երկար կը սպասէ, չէ։ Բայց մինթէ դուք այդպիսի քաղցածից քիչ կը սպասէք. դուք, որ ձեռքներդ ծալել էք, նստել, աչք էք դրել ճանապարհին, օգնութիւն էք սպասում։ Ի՞նչ երևելի բան կը լինէր, եթէ յանկարծ, մի օր, Դիզակում երևար Պարսկաստանից ուղարկած մի մեծ զօրք... Այն ժամանակ, ի հարկէ, դուք այդպէս չէիք լինի, դուք կը յաղթէիք...

Փոքրիկ խմբապետը լեզուով էլ խնայել չը գիտէր, մանաւանդ երբ խօսում էր այնպիսի բաների մասին, որոնք, իր կարծիքով, անհեթեթ էին։ Նրա վերջին խօսքերի մէջ դառն հեգնութիւն կար. դրանով էր նա արտայայտում իր խորին անբաւականութիւնը գործունէութեան այն եղանակի դէմ, որ լաւ էր համարում Դիզակի տէրը։ Ասլանի և Մանասի մէջ մի ակնթարթում արծարծվեց առանձին գաւառների մնայարծութիւնը։ Դիզակեցին զգաց որ իրան ծաղրում է վարանդեցին։ Բաւական չէին այդ խօսքերը, Մանասը ձեռքով մի քանի անգամ թեթև խփեց դիզակեցու մէջքին, որպէս թէ խրախուսում է, որ սպասեն, սպասելը լաւ է...

—Մեր մէլիքը, ճիշդ է, սպասում է օգնութեան, պատասխանեց Ասլանը, աշխատելով իր կողմից ևս շատ չը խնայել վարանդեցուն։—Ամեն ջանք գործ է դնում որ մենակ չը մնայ։ Կարելի էր և մենակ մի բան անել, եթէ Վարանդան այս գրութեան մէջ չը լինէր. դու այստեղ կաթ կաթ արիւն ես հանում, իսկ ինչ են անում Աւետարանոցում։ Եթէ մնացել էր պակաս տեղ, դա այն սիրահարութիւնն է, որ...

—Դու բոլորը պիտի պատմես, խուլ կերպով մռնչաց Մանասը և ձեռքը թափ տալով, հասկացրեց որ չարժէ պատմել։

Նա ինքն էլ գիտէր ամեն ինչ։ Բաւական է, Դիզակը յաղթեց, Վարանդան զինաթափ է դառնում։ Վարանդան ամօթահար է, արժէ՞ նորից հաստատել այդ ճշմարտութիւնը։ Խմբապետը կերպարանափոխվեց մի րոպէում. նա այժմ խորհրդաւոր, առանձնացած մի մարդ էր, կասես թէ աշնան մշուղների մէջ փաթաթված մի սար լինէր։ Հազիւ լսելի ձայնով նա փնթփնթում է, որ պէտք է քնել, բաւական դիշեր է անցել։ Իսկ ինքը չէ պառկում։ Գոռաւ փայտի մի կտոր, սկսեց բզբզել կրակը, կարծես ուզում էր աւելի լաւ լուսաւորել իր չեչոտ դէմքը և ցոյց տալ, որ Ասլանը պիտի, չատ պիտի է բռնել և անխնայ սեղմում է իր, Մանասի, մի հատիկ, բայց խիստ ցաւեցնող վէրքը։

Նոր բոցեր բարձրացան ճարճատելով, պայծառ լուսեր տարածեցին, բայց նրանց օգնութիւնը աւելորդ էր. ինքը, Ասլանը, շատ զգաց իր անզգուշութիւնը։ Նա չը գիտէր թէ այս երկաթի մարդու մէջ էլ կարող է լինել թուլութիւն, այն էլ մի աղջկայ վերաբերմամբ. և սկսեց մեղմացնել իր խօսքերի ծանր ապաւորութիւնը։ Ո՞րպիսի աջողութիւն։ Բաւական էր մի քիչ չարժել անողոք, կոշտ զինուորի սիրտը, և իսկոյն երևան եկաւ թէ որքան մեծ տեղ ունի այդ աղջիկը նրա մէջ։ Երիտասարդը դարձաւ նրա ցաւակիցը, խօսեց իբրև մերձաւոր։ Միայն վիշտը, այո՛, միայն անկեղծ վիշտը հարկադրեց նրան յիշել մէլիքի աղջկայ մոլորութիւնը. չէ՞ որ նա ինքն էլ ազգական է Մէլիք-Աւանի կողմից։ Եւ հարկաւոր էլ չէ ազգական կամ ծանօթ լինել. նոյն իսկ օտարն էլ ցաւում է։ Այդքան հրաշալի աղջիկ, բայց ինչ դառաւ... Նա սպանեց իրան...

(Կը շարունակվի)

ձմեռը. այդ փրկիչը վաշխառուն է, որից առասպելական տոկոսներով այժմ գիւղացին փող է վերցնում իր և իրան կերակրող անասունների կեանքը փրկելու համար: Նա էլ վաղվան օրվայ մասին չէ մտածում, երբ վաշխառուն ձրա հողին ոտի կրունկով հանելու է». նրան հարկաւոր է այսօր ուտելու հաց, նրան հարկաւոր է մի կերպ իր անասուններին դարման օրերին հասցնել: Ճար չը կայ. նա կը մնայ միշտ իր «բարեխիր» չը կորչի: Այժմեան բնական աղետը դեռ շատ երկար զգալ կը տայ իր կորստաբեր հետեւանքները՝ չնորհիւ վաշխառուների զօրեղանալուն:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌԻՑ

—

Փիրջամալ, մարտի 4-ին

Ներկայումս թէ կառավարութեան և թէ մասնաւորներ հետաքրքրող ամենագլխաւոր հարցը Կովկասում աւազակութիւններն արմատախիլ անելն է: Այն անձնաւորութիւնները, որոնք ընդունակ են գրելու և ժողովրդի պատուհասների արտայայտիչը լինելու, հեռու են գտնվում աւազակութիւնների տեղից և այդ պատճառով աւազակութեան ամբողջ պատմութիւնը տեղն ու տեղը արձանագրող ու ուսումնասիրող շատ քիչ մարդիկ կան, եթէ չասենք, որ համարեա չը կան: Աւազակութիւնների մասին դատում են կալինէտների խորքում, մինչդեռ աւազակը գործում է խուլ անկիւններում, գիւղացի անպաշտպան ազգաբնակութեան մէջ: Այդ է պատճառը, որ հարիւր ու մի դատողութիւններ ենք լսում, բայց ոչ մէկն էլ հիմնական և ճիշդ չէ երևում:

Սանձարձակ գողութիւնների և աւազակութիւնների մասին նոյն իսկ պօլիցիան շատ անգամ անտեղեակ է մնում: Այստեղ պէտք է որոնել ամենագլխաւոր չարիքը: Դիմեցէք գիւղացուն և յորդորեցէք, որ նա ամեն անգամ յայտնէ պօլիցիային, որպէս զի իրանից գողացած ապրանքը կարողանայ յետ ստանալ. նա միշտ բացասական պատասխան կը տայ, որովհետև ժողովուրդը որոշ չափով կորցրել է իր հաւատը դէպի պօլիցիան և այդ՝ անպարտաճանաչ պաշտօնեաների չնորհիւ: Նա շատ է գանգատվել, բայց նրա գանգատները անհետևանք են մնացել. ուստի նա աւելի լաւ է համարում դիմել մի միջնորդ թուրքի օգնութեան և փրկանք տալով յետ ստանալ իր ապրանքը, քան թէ պատշաճաւոր իշխանութեան դիմելը. գտնէ միջնորդի օգնութեամբ նա բոլորովին չէ զրկվում իրանից յափշտակված դոյքից:

Կայ և մի գլխաւոր խոչնդոտ, որ թոյլ չէ տալիս գողութիւնները անմիջապէս երևան հանել: Դա վրէժի երկիւղն է: Գիւղացին միշտ սպառնալիքի տակ է. նրան սպառնում է աւազակը, իսկ պօլիցիան պահանջում է, որ նա յայտնէ թէ ով էր, որ գողացաւ իր ապրանքը: Կեանքին սպառնացող վտանգը ստիպում է գիւղացուն չարիքից փոքրագոյնն ընտրել և լռել, զրկվելով իր դոյքից: Ի՞նչ պէտք է անել: Աւազակաբարոյ ազգաբնակութեան մէջ յուսալ տարրական դրպրոցների միջոցով բարոյական կրթութիւն տարածել և նրան կուլտուրապէս բարձրացնել, դա եթէ ոչ անհաւատալի, գոնէ երկար ժամանակի գործ է: Մենք շատ օրինակներ գիտենք, որ յայտնի չարագործութիւնների մէջ աչքի ընկնող գործողներից շատերը քաղաքային դպրոցի կուրսն անգամ աւարտածներից են եղել: Չարիքի առաջն առ այժմ պիտի առնել պարտաճանաչ պաշտօնեաների միջոցով. նոյն իսկ ամենահասարակ չափարն անգամ մեծ դեր կարող է կատարել. բայց դրա համար նա պիտի ազատված լինի իր ներկայ անմախանձելի դրութիւնից: Նրա ռոճիկը շատ քիչ է և նա չէ կարող 12—14 ռուբլի ամսականով իր ձին և անձը կերակրել. չէ որ կը շատ քիչ է և նա չէ կարող 12—14 ռուբլի ամսականով իր ձին և անձը կերակրել. չէ որ նրանցից շատերն ընտանեկան հոգսեր էլ կարող են ունենալ. նա անպատճառ պիտի ուրիշ եկամուտի աղբիւր ունենայ և, ի հարկէ, շատ անարդար աղբիւրներ, ուստի մինչև այժմ շարունակ տիրում է այն յամառ կարծիքը, որ չափարները բացարձակ գողեր են, ունենալով իրանց ձեռքում աւելի յարմարութիւններ: Մի օր ես պատահմամբ դիմեցի մի թուրք չափարի և հարցրի նրանից՝ մթէթ ճիշդ է նրա վերաբերմամբ լսվող կարծիքը: Նա պատասխանեց. «Շատ պարզամիտ էք: Խոտ ու գարու այս թանգութեան ժամանակ չէ՞ որ 12 ռուբլին միայն ձիուս կարող է կերակրել. ապա ես:» Մթէթ հանաք էր:

Գ. Մ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շամախի, մարտի 8-ին

Մենք տրճվում ենք՝ տեսնելով այն փայլուն երախտագիտական զգացմունքները, որ հետզհետէ արտայայտում է հայ հասարակութեան առողջ մտածող դասը դէպի իր վարժապետանոց՝ «Մշակի» խմբագրութիւնը: Հային ներկայ առաջադիմութեան հասցնելու գործում, ամենաբարենաչան և ամենախելացի կերպով բան ու բրիչ գործածող մշակը շատ անգամ է տուժել. նա կրել է ծանր զրկանքներ, բայց անկեղծ սէրը, վեհ և սուրբ գաղափարներին ծառայելու ազնիւ տենչանքները և ապագայի վրա ունեցած հաստատ հաւատը, եղել են նրա արժանայիշատակ հիմնադրի միակ սփոփանքը և մխիթարութիւնը: Հասարակութիւնը իր բուռն զգացմունքներն առաջին անգամ արտայայտեց Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան փառաւոր 25-ամեակին: Այժմ մեր սրտի ուրախութիւնը մխիթարելով հայոց գրականութեամբ հետաքրքրվող ստուար բազմութեան հետ, չնորհաւորում ենք ազնիւ «Մշակի» 25-ամեակը. չնորհաւորում ենք նոյնպէս նրա ամենօրեայ դառնալը: Ցանկանում ու հաւատում ենք, որ նա այժմ աւելի միջոց ունենալով, աւելի էլ պիտի ծառայէ մեր ինքնաճանաչողութեան շահերին, որմնցից մէկն էլ «Մշակի» սրտին մօտիկ՝ կանանց իրաւունքների պաշտպանութեան խնդիրն է: Ցանկանում ենք մեր բոլոր սրտից, որ «Մշակը» յարատեւ շատ տարիներ:

Անանա Սարգիսբէկեանց, Աստղիկ Սարգիսբէկեանց, Սաշենկա Սարգիսբէկեանց, Ովսանանա Սարգիսբէկեանց, Կենավարդ Սարգիսբէկեանց, Աննա Ս. Ղարաղշանեան:

—

Երևան, մարտի 2-ին

Ինչպէս ամենքը, նոյնը և մենք, ուրախ սրտով ողջունում ենք «Մշակիդ»—հայոց առաջաւոր օրգանի արդիւնաւոր գործունէութեան 25-ամեակը և ամենօրեայ դառնալը: Ցանկանում ենք, որ անմահ հիմնադրի քարոզած մտքերը միշտ ծլեն ու ծաղկեն մեր մտաւոր անդաստանում, ցանկանում ենք, որ նրա արժանաւոր յաջորդներն էլ միշտ բարձր պահեն մեր ամենից յարգված «Մշակը»:

Տ. Սաաա Մամիկոնեանց, Տ. Դայիանէ Ազիզեանց:

—

Պաղաւերջ (Զանգեզուր), փեբր. 27-ին

Անկեղծ սրտով և ջերմ ողջոյնով շտապում ենք չնորհաւորել «Մշակի» ամենօրեայ դառնալը՝ նրա 25-ամեակի հետ միասին և ցանկանում ենք, որ նա յարատեւ շատ քսանհինգ տարիներ, ընթանալով իր անմահ հիմնադրի լուսաւոր և ազատամիտ ուղղութեամբ:

Միքայէլ Բաղդասարեան, Սարգիս Անտոնեան, Բաղչի բէկ Մէլիք-Փարսադանեանց (Բեխ գիւղից):

—

Բալաքեան, մարտի 8-ին

Չնորհաւորելով «Մշակի» 25-ամեակը և ամենօրեայ հրատարակութիւնը միացնում ենք մեր անկեղծ բարեմաղթութիւնները նրանց հետ, որոնք յարգում են «Մշակը»: Թող շատ 25 ամեակներ բոլորէ «Մշակը» հայոց մտաւոր անդաստանի վրա, թող յաւիտեան փայլէ նա՝ սրբորելով ամեն կողմը բարի և գեղեցիկ սերմեր. ցանկանում ենք «Մշակի» ղեկավարներին այժ, աջողութիւն և եռանդ անչեզ և աներկիւղ առաջ տանելու ազնիւ գործը՝ անմահ հիմնադրի դաղափարներով:

Աւագ Աւագեանց, Սարգիս Խանդուլեանց, Մարտիրոս Մէլիք-Յովհաննէսեանց, Կարապետ Մէլիք-Յովհաննէսեանց, Ղևոնդ Խաչումեանց, Խաչատուր Դաւթեանց, Ազարի Նազարեանց, Մկրտիչ Մկրտչեանց, Յովհաննէս Օհանջանեանց, Բաղդասար Տէր-Հայրապետեանց, Հայրապետ Բաղդասարեանց, Առաքել Կոստիեանց, Մակար Մակարեանց, Գուրամբար Բաղդասարեանց, Աստուածատուր Սէրէբրակեանց, Առաքել Լէկեեանց:

—

Զահուկ, փեբրվարի 27-ին

Սրտանց չնորհաւորում ենք «Մշակի» ամենօրեայ դառնալը և 25 ամեակը, կը ցանկանք շատ քսան և հինգամեակներ՝ անչեզ ընթանալ իր անմոռանալի և անմահ հիմնադրի բարձրացրած դրօշակի տակ: Թող «Մշակի» այժը և կարողութիւնը կրկնապատկվի, որպէս զի աւելի խոր ու լայն տարածի հանդուցեալ հիմնադրի մտքերը և դաղափարները, մշտապէս պաշտպանելով հասարակութեան շահերը, գլխաւորապէս մշակ դասակարգինը:

Ուսուցիչներ՝ Արսէն քահանայ Մէլիք-Աղասանեանց, Արտէմ Տէր-Մարգարեանց, Ստեփանոս Տէր-Յակոբեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Ուրմի գաւառի նեստորական ասորիների ուղղափառութիւն ընդունելու խնդիրը լուծվելու վրա է: Մեր ընթերցողները բաւական ծանօթ են այդ խնդրին. պէտք է միայն այս ասենք, որ անցեալ տարի, երբ Ուրմի ուղարկվեց Երևանի ռուսաց եկեղեցու քահանայ Սիմեոնովի, այդտեղ 15,000 ասորիներ ոչ թէ ուղղափառութիւն ընդունեցին, ինչպէս հաղորդեցին թղթակիցները, այլ լոկ գրաւոր յայտարարութիւն ներկայացրին, թէ իրանք ցանկութիւն ունեն միանալ ռուսաց եկեղեցու հետ: Հայր Սիմեոնովին միայն ցուցակագրեց ցանկացողների անունը և նեստորականների կողմից ընտրված մի պատգամաւորութեան հետ գնաց Պետերբուրգ, ուր միութեան վերջնական պայմանները պէտք է մշակվեն և քննվեն: Այժմ «Новое Время» լրագիրը հետևեալն է հաղորդում այդ խնդրի մասին. «Նեստորական եկեղեցու ուղղափառ եկեղեցու հետ միանալու հարցը, որ յաճախ յարուցվել է, այժմ նշանաւոր հետևանքի պէտք է հասնի, չը նայելով, որ ուղղափառ միսիոնարը ժամանակաւորապէս յետ կանչվեց Թիֆլիս և քաղաքական բարդութիւնների երկիւղ կայ: Խնդրի լուծման համար սպասում են Մոսկվայի նոր միտրոպոլիտ Վլադիմիրի և Վրաստանի նոր էկզարխ Ֆլավիանի Պետերբուրգ դալուն: Երբ Պարսկաստանի ուղղափառ միսսիայի գործունէութեան ծրագիրը կը քննվի, այն ժամանակ մշտական հոգևոր միսսիա կը հաստատվի Ուրմիում»:

—

Այլքսանդր II-ի դատաստանական բարերար բէֆորմները մեր երկրում մտցնվելիս, ինչպէս յայտնի է, ենթարկվեցին մի քանի կրճատումների և սահմանափակումների: Այդ կրճատումների թւում գտնվում է և դատաւորների անփոփոխ մնալու սկզբունքի սահմանափակումը: Ռուսաստանում դատաւորը անձեռնմխելի է և կարող է պաշտօնից հեռացնվել միայն դատարանով, երբ որ և է զեղծում գործած լինի: Չնորհիւ այդ վեհ սկզբունքի, դատաւորը իրան անկախ է զգում և կարող է միանգամայն անձնատուր լինել իր կոչման և պաշտօնին, առանց երկիւղ կրելու, թէ կարող է հեռացնվել պաշտօնից: Այդ սկզբունքը սահմանափակված էր Անդրկովկասի և Պրիվիսլեան երկիրների վերաբերմամբ, որոնք զուրկ են նոյնպէս մինչև այսօր երդուեալ դատարանի հաստատութիւնից: Այժմ, ինչպէս հեռագրում են Պետերբուրգից տեղական լրագիրներին, արդէն հրատարակվել է օրէնք, որով ջնջվում է այդ սահմանափակումը: Ցաւանք որ հեռու չէ և այն օրը, երբ կը մտցնվի դատաստանական բէֆորմների և միւս անհրաժեշտ հիմնարկութիւնը—խղճի դատարանը, երդուեալ դատաւորների ինստիտուտը:

—

Ներսիսեան դպրոցի ուսուցիչների և ծառայողների համար ծրագրված կենսաթոշակի կանոնադրութիւնը վերջնականապէս ընդունվեց դպրոցի հոգաբարձութեան կողմից և ուղարկվեց Վեհափառ Կաթողիկոսին հաստատելու համար:

—

Ինչպէս յայտնի է, Թելեթի ուխտատեղում, ուր Համբարձման տօնին հաղարաւոր ուխտաւորներ են ժողովվում, շատ քիչ յարմարութիւններ կան այնտեղ գնացողների համար: Ուխտաւորների մեծ մասը ստիպված է մնալ բացօդեայ, որ շատ անյարմար է անձրևային եղանակին: Ուխտատեղի արդիւնքը յատկացրած է Ներսիսեան դպրոցին, որի հոգաբարձութիւնը և կառավարում է Թելեթի վանքը իր կալուածներով: Հոգաբարձութիւնը իր վերջին նիստում, աչքի առաջ ունենալով յիշած անյարմարութիւնները, մարտի 11-ի նիստում որոշեց չինել մի շարք վրանոներ, որոնց տակ կը կարողանան ուխտաւորները պատսպարվել անձրևից և արևից:

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի մէջ հարց է յարուցվել կազմել եկող 1899 թուականին ցուցահանդէս, որի նպատակը պէտք է լինի ներկայացնել մեր երկրի արդիւնագործութեան ներկայ վիճակը և այդպիսով նախապատրաստվել Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին մասնակցելու:

—

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը որոշել է առաջարկել անդամների ընդհանուր ժողովին յատկացնել Թիֆլիսի ապագայ պօլիտեխնիկումին 10 հազար ռուբլի՝ ժողովարանի միջոցներից:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ Ախալցխա տանող ճանապարհին, այստեղից եօթներորդ վերստի վրա, պատահեց հետևեալ դէպքը: Արագօվա գիւղացի փուրգոնատէրերը սովորութիւն ունեն, երեկոն վրա հասած ժամանակ, փուրգոնները, վարձված պահապանի հսկողութեամբ, թողնել ճանապարհի այդ տեղը և ձիերով գնալ իրանց գիւղը՝ դիշերելու համար: Այս անգամ պահապանը, խիստ ցրտի պատճառով, կրակը լցնում է «մանղալը» և գնում փուրգոնի մէջ յարմարեցրած մի տեղ, յետոյ մի վերմակ է դցում վրան և, քուրսու նման, ոտները դնում տակը, որ տաքանայ. այդպէս էլ քնով է անցնում. բայց կրակը թափվում է և, արկղների մէջ լուցկին վառվելով, հրդեհ է առաջանում, որից այրվում են բաւական ապրանք՝ թէյ, ծխախոտ, թել, պատրաստի քսակներ և այլն: Պահապանը արթնանում է այն ժամանակ, երբ իր շորերն սկսում են այրվել, որից յետոյ, գլուխը կորցրած, նա վազում է գիւղ՝ իմաց տալու եղելութիւնը: Երբ վրա են հասնում փուրգոնատէրերը, տեսնում են, որ փուրգոններից մէկը, բացի երկաթի մասերից, ամբողջովին այրվել է իր մէջ բոլոր ապրանքով, և կրակը արդէն անցնում է միւս փուրգոնին. սակայն աջողվում է հանգցնել այդ տարօրինակ հրդեհը և ազատել միւս փուրգոնները, որոնցից մէկը բեռնված է լմնում նաւթով: Վնասը փուրգոնի հետ միասին հասնում է մօտ հազար ռուբլու, որը, ինչպէս երևում է, ամբողջովին պիտի ծանրանայ խեղճ փուրգոնատիրոջ վրա:»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Մի դաղթական կին, դիմելով այստեղի Բարեգործական ընկերութեանը, արտասուքով յայտնում է, որ իր «ումուդ-ապաւէն» զաւակը ծանր հիւանդ է և բժշկական օգնութիւն է խնդրում: Բայց փոխանակ օգնութիւն ստանալու, ստիպված է լինում մի քանի անգամ վարչութեան նախագահի մօտից բժշկի մօտ գնալու և բժշկից նախագահին դիմելու և այսպէս մի քանի օր գնալ գալուց յետոյ նա մնում է առանց մի օգնութեան, մինչդեռ տղան թոքերի հիւանդութեամբ տանջվելիս է եղել: Սրա նման դէպքեր շարունակ կրկնվում են. սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ անտարբերութիւն դէպի ընկածի ցաւերը, որ պատիւ չէ բերում ոչ Բարեգործական ընկերութեանը և ոչ էլ բժշկին, որ մի երկու ամիս առաջ գլուխ էր պատռում ընկերութեան վարչութեան կազմի մէջ մտնելու»:

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են: «Մարտի 1-ին, կիրակի, վերջապէս մեր երէցփոխը ժողով հրաւիրեց հաշիւը կարդալու համար: Բայց... հաշիւ փոխարէն սկանդալ տեղի ունեցաւ: Երէցփոխը կարդում է հաշիւը: Պ. Ղ. հաշիւ վերաբերմամբ արդարացի նկատողութիւն է անում: Այդ ժամանակ ժողովականներից մէկը, մի ոմն Գ., բարձրանում է տեղից և սկսում է մեղադրել պ. Ղ.-ին այնպիսի բաների մէջ, որոնք մեղադրողի երևակայութեան ծնունդն են: Պ. Ղ., վիրաւորված, բողոքում է և դուրս գնում դանդիճից. նրա օրինակին հետևում են ժողովականներից շատերը: Ժողովը փակվում է: Կոպիտ սկանդալի հեղինակը երբէք ոչ մի հաշիւ և յարաբերութիւն չէ ունեցել պ. Ղ.-ի հետ: Արդեօք նրա արարքին խառն չէր ուրիշի մատը, մի մատ, որին հաճելի չէր պ. Ղ.-ի ներկայութիւնը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրներում տպված է. «Հայկական կոմիտէսը Կ. Պոլսում ուղարկել է եւրոպական դեսպաններին մի յիշատակագիր, որի մէջ մատնացոյց լինում, թէ հայերի հալածանքը հայաբնակ գաւառներում շարունակվում է. այսպէս, նորերս սպանվեց Դօկրան անունով հայը, որ Վանում ոստիկանական կոմիսարի պաշտօն ունէր: Թիւրքերի կողմից տարածվեց լուր, որ իբր թէ Դօկրան անառակութիւն է կատարել թիւրքաց բաղանիքներից մէկում և դրանով գրգռել ժողովուրդը: Յիշատակագրի մէջ ապացուցանվում է, որ եթէ այդ լուրը ճիշդ լինէր, այն ժամանակ «ժողովրդական զայրոյթը» պէտք է գրգռէր աւելի թիւրքերի, քան հայերի դէմ: Դօկրանի սպանութեան հետևեց Վանի հայոց թաղի մի մասի կողոպտումն: Ապա յիշատակագրի մէջ ասված է, որ Դօկրանի քոյրը բանտարկված էր առանց պատճառի և դատապարտված մշտական բանտարկութեան: Նա ուղարկվել է Տրիպոլիս՝ չղթայակապ»:

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՑԻՑ

—

Լոնդոն, մարտի 12-ին

Մր. Քըրզընի յայտնութիւնէն, որ ըրած է պատգամաւորներու ժողովին մէջ վերջին անդամ՝ կը տեսնվի, թէ Թիւրքերը շուտ չը պիտի ձգեն Թէսալիան: Դաշնագրութեան համեմատ, Բարձրագոյն Դուռը պարտաւոր է թողուլ Թէսալիան՝ պատերազմական տուգանքի վճարումէն չորս չաբաթ ետք: Սակայն Քըրզընի յայտնութենէն կը տեսնվի, թէ Թիւրքիոյ կողմէն ո և է դրաւական մը չը կայ Թէսալիան թողնելու, և Ցունաստան եթէ ուզէ, կրնայ դրամով գնել Թէսալիան, նրան նուաճողի ձեռքէն:

Արդարև շահամոլութիւն Եւրոպիոյ համար պիտ եղած է և շահը անոնց այնքան կուրացուցած է, որ հողային և դրամական մինչև իսկ աննշան շահերու համար՝ փոքր ազգութեանց գոյութիւն, իրաւունք և խաղաղութիւն կը վտանգեն, և բնականաբար Բարձրագոյն Դուռ, քաջալերված, կը յետաձգէ Թէսալիոյ թողնելը և կը սպառնայ չը լսել բնաւ, ցորչափ կրէտական խնդիր չի կարգադրուիր:

Ցունաստանի թագաւորի կեանքի դէմ եղած դաւադրութեան անյաջողութեան լուրն այստեղ ուրախութեամբ ընդունվեց: Առանց մանրամասնութեան երթալով, սա կրնանք ըսել, թէ այն փորձին մէջ, որ եղաւ Գէորգ թագաւորի սպանման համար, թագաւորը երևցաւ տէր բարձր և վսեմ նկարագրի: Այդ փորձը պիտի ընէ նրան աւելի ժողովրդական, քան էր առաջ: Ռուսիոյ Զարը այդ դէպքէն ի վեր աւելի համակրանօք կը նայի Ցունաստանի արքայական ընտանիքին, ինչ որ կը տեսնվի իր յամառ պնդման մէջ Գէորգ իշխանի Կրետէի կառավարիչ ընտրելու նկատմամբ:

Եւրոպիոյ քաղաքական հորիզօնը երթալով մթնանալու վրա է: Աւստրիա ընկնելու և քայքայվելու վրա է և տարակուսելի է իր միութեան պահպանումը մինչև իր թագաւոր կայսեր մահը: Հայկական սահմանագլուխներու վրա եղած շարժումներ, իբրև Ռուսիոյ կողմէն՝ Կ. Պոլսոյ մէջ անարեկամբ կը դիտվին: Մակեդոնիոյ մէջ եղած հալածանքի չարունակութեամբ՝ ընդհանուր պուլղարական շարժման մը առաջնորդելու հաւանականութիւնը զօրանալու և իրականանալու վրա է: Սերբիա կը փափագի, որ Մակեդոնիոյ յունական մասը միանայ Ցունաստանի, ըստ որում Գերմանիա առիթ պիտի գտնէ բոլորովին փակել Թէսալիոյ և Կրետէի խնդիրը: Եթէ իրօք Եւրոպա կը փափագի խաղաղութիւնը վերապահել մերձաւոր արևելքի և արևելեան Եւրոպիոյ մէջ, պէտք է որ մակեդոնական հալածանք վերջանան, հայերու շարունակեալ և անվերջ տանջանք և հեկեկանք վերնան, Կրետէ ազատ լինի և Վոսփորի բարբարոս բռնակալութիւն ի տիմանց քայքայի:

Զարմայր

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, մարտի 7-ին

Մարտի 6-ին Պոլսի լրագիրները սա հերքումը հրատարակած են.

«Հայերէն «Բիւզանդիոն» լրագրին փետրվար 21-ի 404 թիւով հրատարակած յօդուածի մը մէջ Խապայեան Սահակ եպիսկոպոսին Սիսի կաթողիկոսութեան վրա խօսված է թէև, բայց այս մասին արդարութեան նախարարութիւնը ո և է տեղեկութիւն չունենալով, նոյն նախարարութեան հրահանգով այդ լուրը բացարձակապէս կը հերքվի»:

Այս հերքումը պատրիարքարանի է ուղղված և պատրիարքին դիրքը շատ կը խախտվի այս կերպով: Տեսնենք ինչ պիտի ընէ:

«Բիւզանդիոն» չարունակում է իր յարձակումները «Մշակի» և իր մէջ գրողների վրա: Ասում է, թէ «Մշակ» հալածում է, ով իր կարծիքէն չէ, իր լրագրին մէջ: Զը պէտք է մոռանալ, թէ ինչ է անում «Բիւզանդիոն», և այդ՝ տարիներէ ի վեր. ով իր դէմ է, նրան հալածում է ոչ թէ գրչով, հապա զրպարտութիւններով ու մատնութեամբ: Երբ այս ճշմարտութիւնը յիշենք, զրզուանքէ ուրիշ բան չէ կարելի զգալ վարձկան այդ թերթին համար, որի ըսածներուն ամէն եռքը նշանակութիւն տալը՝ երբէք չարժէ...

Ո՞վ չէ յիշում հռչակաւոր Բահրի փաշան, հազարներով հայերի արիւնը խմողը, և որի պատճառաւ էր Տրապիզոնի ջարդը: Այդ նոյն Բահրի փաշան Ատանայի նահանգին կառավարիչ է անուանվում, և Պոլսոյ հայոց պատրիարքը գնում է փաշային ապարանքը, թէև ամենևին այդպիսի մի սովորութիւն չը կայ, շնորհաւորելու նորին բարձր վսեմութիւնը:

Պոլսեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագրի Օդէսայի թղթակիցը հաղորդում է, որ մի քանի չաբաթից յետոյ՝ Ռուսաստանը մտադիր է յանձնել սուլթանին պաշտօնական և վճռական յայտարարութիւն կրետական հարցի, Թեսալիայից օսմանեան զօրքը հեռացնելու և Մակեդոնիայի վիճակի մասին: Աբդուլ-Համիդին պէտք է առաջարկվի կամ զինջել Ռուսաստանին առանց ձգձգումների, կամ բաց կերպով գործել նրա դէմ:

—«Nord» լրագիրը հերքում է այն լուրը, թէ ռուսաց կառավարութիւնը զօրք է կենտրոնացրել Կարսում, որպէս զի ստիպի Թիւրքիային հատուցանել Ռուսաստանի պարտքը: «Ռուսաց կառավարութիւնը, ասում է լրագիրը, մինչև այժմ հարկաւորութիւն չունէր դիմել ըսպառնալիքի, որովհետև Թիւրքիան շատ լաւ հասկանում է Ռուսաստանի իրաւունքները. նա բաւականացել է դիպլոմատիական հաղորդագրութեամբ, որը, անկասկած, բաւական կը լինի Թիւրքիային իր պարտաւորութիւնները յիշեցնելու համար»:

—Պարիզից հեռագրում են, որ Սպանիայի մինիստր-նախագահ Սագաստա մտադիր է առաջարկել Միացեալ-Նահանգներին միջնորդ դատարան «Մէն» զրահաւորի պայթիւնի գործի համար: Միջնորդ դատաւոր պէտք է լինի կամ Լէօն XIII պապը կամ բելգիական թագաւորը:

—Ներկայումս Պիրէյում գտնվում են 17,000 կրետացիներ և 12,000 փախստականներ Թէսալիայից, որոնք պահպանվում են պետական հաշուով: Ուրիշ շատերը տառապեալ վիճակի մէջ են:

—«Times» լրագրում տպված է մի հեռագիր Վիէննայից, որ հաղորդում է, թէ Կրետէի խաղաղացումը յանձնվելու է Ֆրանսիային, Ռուսաստանին և Անգլիային: Աւստրիան և Գերմանիան չեն հակառակում այդ ծրագրին. միայն Իտալիան, իբրև Միջերկրական ծովի վրա գտնվող մեծ պետութիւն, ցանկանում է նոյնպէս մասնակցել կրետական գործի կարգաւորման:

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Իզմիր-Քիօսկում պատրաստութիւններ են տեսնվում Վիլհելմ կայսրին ընդունելու համար:

—Լրագիրներին Աթէնքից հաղորդում են, որ յունաց Գէորգի իշխանը ապրիլի սկզբին ռուսաց զինուորական նաւով Պետերբուրգ կերթայ և ապա այնտեղից ճանապարհ կընկնի Եւրոպա մնացած եւրոպական մեծ պետութիւնների արքունիքները այցելելու համար:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԼՈՆԴՈՆ, 11 մարտի: Վաշինգտոնից «Բէյտէրի գործակալութեան» ստացած հեռագրի խօսքով, այնտեղի սպանիական դեսպանը հերքում է, որ ինքը հեռագրել է Մադրիդ, թէ իրան յայտնի չէ «Մէն» նաւի պայթիւնին վերաբերեալ զեկուցման բովանդակութիւնը:

ՇԱՆԳՀԱՅ, 11 մարտի: Զունկինգից ստացված հեռագրի համեմատ, այնտեղ հաւաքված միլիցիօներները չը կամեցան թոյլ տալ, որ մահվան պատժի ենթարկեն բժիշկների ամերիկական գիտնական միսսիայի տեղացի օգնականի սպանողներին: Սպանութիւնը տեղի ունեցաւ մարտի 5-ին, միսսիայի վրա յարձակվելու ժամանակ: Օտար պետութիւնների հիւպատոսները առաջարկեցին տաօտային ցրվել միլիցիօնէրներին, մահվան պատժի ենթարկել սպանողներին և կալանաւորել խռովարարների պարագլուխներին. բացի դրանից, միսսիայի վրա յարձակվելու համար պէտք է վճարվի 500 տաէլ վարձատրութիւն, նոյնպէս պէտք է ձեռք առնվեն միջոցներ նրա պաշտպանութեան համար: Տաօտայ պէտք է թոյլ տայ միսսիային նորից իր տան սեփականատէրը դառնալ:

ՊԱՐԻԶ, 11 մարտի: Ծովային մինիստրը հրամայեց Շէրբուրգի և Բրէստի նաւատօրմի հրամանատարներին՝ պատրաստ ունենալ նաւատորմերը:

Անգլիական աղբիւրից ստացված հեռագիրը հաղորդում է, որ Տօկիօում ստորագրված է ֆրանս-եապօնական դաշնագիր: Նոր դաշնագրով Ֆրանսիան հրաժարվում է իր հիւպատոսական նաւերից Եապօնիայում:

ԿԱՅԻՐԷ, 11 մարտի: Մարտի 10-ին առաջին ընդհարումն տեղի ունեցաւ եգիպտական զօրքերի և դէրվիշների մէջ, Ատբարի գետաբերանից 11 մղոն հեռաւորութեան վրա: Երկու կողմերի ոյժերն ևս անհայտ էին: Տաք կռուից յետոյ դէրվիշները յետ մղվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի: Մոսկվայի համալսարանի ռէկտոր Նէկրասով Մոսկվայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու է նշանակված:

Բիւլբուլէն: Մեծ Իշխանուհի Միլիցա Նիկոլաեվնայի առողջութիւնը արագ կերպով վերականգնվում է: Նորածին Իշխանուհու դրութիւնը, կանոնաւոր կերպով կերակրվելու շնորհով, այնքան վտանգաւոր չէ երևում:

ՋԷԴԴԱ, 12 մարտի: Քաղաքը անբարեյաջող է յայտարարված ժանտախտի կողմից:

ՊԱՐԻԶ, 12 մարտի: Զօլայի դէմ էկսպէրտների սկսած գործի քննութիւնը յետաձգված է, որովհետև Զօլան դանգատ ներկայացրեց, որի մէջ ասում է, թէ այդ գործը ուղղիչ ոստիկանութեան դատարանի քննութեան ենթակայ չէ:

ԲԵՐԼԻՆ, 12 մարտի: Բէյլիսատագ: Քննվում է նաւատորմին վերաբերեալ օրինագիծը: Օրինագծի կողմն են՝ կենտրոնի մի մասը, պահպանողականները, ազատամիտների մի խումբ: Օրինագծի հակառակ են խօսում՝ սոցիալ-դէմոկրատները, գերմանական ժողովրդական կուսակցութիւնը և լեհերը: Մնացած վիճաբանութիւնները յետաձգված են մինչև վաղը:

ՊԱՐԻԶ, 12 մարտի: Պատգամաւորների ժողովի զինուորական յանձնաժողովը հաստատեց այն նախագիծը, որը իրաւունք է տալիս կառավարութեանը, ծովային հեռու արշաւանքի դէպքում, ձեռք բերել բոլոր ֆրանսիական նաւերը ամեն տեղ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 1 րոպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպէին Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 15 րոպէին: Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 28 րոպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ դիշերվայ 12 ժամ 6 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 55 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 15 րոպէին: Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 34 րոպէին: Բաքու է հասնում ցերեկվայ 1 ժամ 2 րոպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԱՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին: Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 12 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամին: Բաքու է հասնում առաւօտեան 6 ժամին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդները ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին, և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—56 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խիտ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հանախորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

89—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

1898

„Բազմավէպ Հանդիսարան“

ԱՄՍԱԳԻՐ

(Յիսներորդ վեցերորդ տարի)

«Բազմավէպ Հանդիսարան» գրական բանասիրական, պատմական, կրթական և գիտական, կը հրատարակվի նոյն ծաւալով, աւելի ճոխ և հետաքրքրական նիւթեր մատակարարելով իր ընթերցողաց:

Տարեկան գինն է 10 ֆրանկ, կանխիկ վճարելի:

Հասցէն՝ Rédaction de la revue „BAZMAVEP“. St. Lazare, VENISE (Italie). 2—6

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, մարտի 15-ին

Բաղուի հայոց դրամատիկական խումբը

Ի ՆՊԱՍՏ Պ. ՑՈՎ. ԱԲԷԼԵԱՆԻ

կը ներկայացնէ առաջին անգամ

ԱՆՄԵՂ ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐ

Կոմեդիա 4 գործ. հեղ. Օստրօվսկու, թարգմ. Ատովմեանի:

Մասնակցում են՝ օր. Մարի-Հրանոյշ, տիկ. Մէլիքեան, տիկ. Սիրանոյշ, օր. Վարդուհի, տիկ. Փառանձեմ, պ.պ. Աբէլեան, Արաքսեան, Մէլիք-Յովսէփեան, Պետրոսեան, Վրոյր, Օհանեան, և ուրիշներ:

Սկիզբը ճիշդ 8 ժամին է: Տեղերի գինը բնական է: Տօմսակները կարելի է ստանալ միմիայն թատրօնի կասսայում և ոչ-ոքի չեն ուղարկվի: 2—2

Լոյս տեսաւ

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

(Պատմական տեսութիւն)

ԳԻՆԸ 20 ԿՕՊ.

Դիմել՝ ПЕТЕРБУРГЪ, Васильев. остр. 6 л. д. 17, кв. 6, Е. Топчяну. 4—5

Ա Զ Դ

ԴՈՐՊԱՏԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ օգտին ընդունվում են գրքերի և զանազան հրատարակութիւնների կամաւոր նուէրներ: Հաղորդելով այդ մասին հայ բանասէր հասարակութեան, դիմում ենք առանձնապէս նաև մեր յարգելի հեղինակներին և թարգմանիչներին նուիրել այստեղի նորակազմ գրադարանին մի-մի օրինակ իրանց թարգմանական կամ ինքնուրոյն հրատարակութիւններից: Հասցէն՝ ЮРЬЕВЪ (Дерптъ) Ратушная ул. домъ № 25. Варосу Аршакуни.

Գրադարանիս նպատակը հանակրող հրատարակութիւնները թող բարեհաճեն արտատպել այս լայտարարութիւնը: 5—10

ՄԵՐՎ ՔԱՂԱՔՈՒՄ

(Օֆիցերսկայա փողոց, տուն Դանիէլեանցի) բաց եմ արել նոր հիւրանոց ՄՈՒՐԿԱԲՍԿԻ ՎԵՏՎԸ նումէրներով: Պատրաստվում են ամեն տեսակ կերակուր: Ստացվում են լրագիրներ:

5—5 Ցարգանօք Ի. Ս. Գաբրիէլով

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

Ամսագիր, որ հրատարակվում է Վիէննայում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ՝ 4 Ռ.

Դիմել այս հասցէով. Rédaction «Hantesse», VII/2 Mechitharistengasse, 4, VIENNE.

3—6

ԱՅՐԻ ՄԻ ԿԻՆ

որ հինգ երեխաներ ունի և գտնվում է անօգնական վիճակի մէջ,

ԽՆԴՐՈՒՄ Է ԲԱՐԻ ՄԱՐԴՈՑ

որդեգրել, կամ ժամանակաւորապէս վերցնել իր 8 և 12 տարեկան աղջիկներին, կամ տան մէջ պահելու, կամ ուսման, կամ արհեստի տալու համար:

Դիմել այս հասցէով՝ Александровская улица, № 50, домъ С. Меликовой, այրի Նոյեմզար Զուլֆակեանին: 5—5

Մոսկվայի՝ արևելեան լեզուների Լազարեան ճեմարանի կողմից

Հ Ա Շ Ի Հ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆԻ ԿՏԱԿԱԾ ԴՐԱՄԱԳԼԽԻ ԱՌ 1897 Թ.

	տոկոսաբեր թղթեր	առձեռն դրամ Ր.	Կ.
Մ Ո Ի Տ Ք			
Կար ց'մէկն յունվարի 1897 թ.	67,500	1,184	97
Մուտք է եղել յընթացս 1897 թ.	30,400	3,839	56
	97,900	5,024	53
Ե Լ Ք			
25,000 արժողութեամբ 6½% արժեթղթերի ժամանակը լրացած լինելու պատճառով փոխադրված է 4% պետական բենտայի, որի համար ծախսված է 800 ր.: Հարաւ-արևմտեան երկաթուղու արժեթղթեր, ընդամենը	25,800		
Վճարված է տոկոսաբեր թղթեր գնելու համար 4,318 ր. 54 կ. և 1896 թ. հաշիւը տպագրելու համար 23 ր. 52 կ., ընդամենը		4,342	6
ց'Մէկն յունվարի 1897 թ. կայ առձեռն	72,100	682	47

Ծանօթութիւն: Ամբողջ դրամագլուխը գտնվում է Մոսկվայի նահանգական գանձարանում և սկսած 1883 թվից 125 տարվայ ընթացքում պէտք է աճի մինչև 12 միլիոն ր. գումարի, որից յետոյ պէտք է գործադրվի կտակողի անունով ուսումնարաններ և թոշակներ հիմնելու համար: 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Марта 1898 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13